ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920ԱԿԱՆՆԵՐԻՆ

ԱՐՏԱՇԷՍ ՂԱԶԱՐԵԱՆ (artashes.ghazaryan@rambler.ru)

ՄՈՒՏՔ

ԺԹ. դարավերջ-1900ականների սկզբից աւետարանականութեան կենտրոնը Արեւելեան Հայաստանում դառնում է Երեւանը, որտեղ Հայաստանի առաջին Հանրապետութեան տարիներին (1918-20) եւ Հայաստանի խորհրդայնացումից (1920) յետոյ գործում էին բազմաթիւ փորձառու հայ աւետարանական հովիւներ, քարոզիչներ, հայ աւետարանական յայտնի գործիչներ: Նրանք քայլեր ձեռնարկեցին Արեւելեան Հայաստանի հայ աւետարանականներին եւ առանձին գործող համայնքները մէկ միութեան մէջ միաւորելու ուղղութեամբ: Դրա արդիւնքը եղաւ Հայ Աւետարանականների Արարատեան Միութեան (ՀԱԱՄ) կամ համայնքի կազմաւորումը, որը ցարական Ռուսաստանի կառավարութիւնը N 4150 գրութեամբ պաշտօնապէս ճանաչեց 1914 Յունուարի 31ին[1]: 1918 Մայիսի 28ին Հայաստանի Հանրապետութեան հռչակումով հայ աւետարանական համայնքները եւ ՀԱԱՄը նոր կեանք վերապրեցին արդէն ազգային պետականութեան գոյութեան պայմաններում: Գաղթած արեւմտահայ աւետարանականները, իրենց հերթին, նոր լիցք հաղորդեցին աւետարանական գործին Հայաստանի Հանրապետութիւնում:

Խորհրդային Հայաստանում մինչեւ 1920ականների վերջը, երբ ստալինեան բռնաճնշումների հետեւանքով փակուեցին եւ արգելուեցին բոլոր եկեղեցիներն ու կրօնական կազմակերպութիւնները, գործում էին հայ աւետարանական կազմակերպուած համայնքներ եւ եկեղեցիներ, որոնք պաշտօնապէս ճանաչուել էին խորհրդային կառավարութեան կողմից եւ գործունէութիւն էին ծաւալում իրենց կանոնադրութեան ու խորհրդային օրէնքների շրջանակներում[2]:

Յօդուածում, հիմնուած հիմնականում արխիւային տուեալների վրայ, կը ներկայացնենք հայ աւետարանական համայնքների գործունէութիւնը

---

[1] Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆ. 1562, ց. 1, գ. 1, թ. 2. նաեւ՝ Վ. Միքայէլեան, *Կրօնական սահմանադրութիւն հայ աւետարանականաց Արարատեան համայնքի*, Երեւան, ա.հ., 1923, էջ 5:

[2] Ա. Ղազարեան, «Հայ աւետարանական համայնքները Խորհրդային Հայաստանում 1920-60-ական թթ.», *Հայ Աւետարանական Եկեղեցի եռամսեայ հանդէս*, Երեւան, 1:2010, էջ 7:

Խորհրդային Հայաստանում 1920ականներին: Նիւթի մեծ մասն առաջին անգամ է դրւում գիտական շրջանառութեան մէջ:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920ԱԿԱՆՆԵՐԻՆ

Խորհրդային Հայաստանում, մինչեւ 1920ականների վերջը թոյլատրուել է ՀԱԱՄի եւ հայ աւետարանական եկեղեցիների պաշտօնական գործունէութիւնը: ՀԱԱ միութիւն կամ ՀԱԱ համայնք անուան ներքոյ միաւորուած էին նախկին Երեւանի նահանգի (որն ընդգրկում էր գրեթէ ողջ Արեւելեան Հայաստանը) հայ աւետարանականները: ՀԱԱՄը միաւորում էր հիմնականում Երեւանի, Վաղարշապատի, Ալեքսանդրապոլի (Ալեքպոլ, 1924-90՝ Լենինական, 1990-92՝ Կումայրի, 1992ից՝ Գիւմրի), Նոր Բայազէտի եւ նրանց շրջակայ գիւղերի, իսկ մինչեւ Հայաստանի խորհրդայնացումը նաեւ՝ Կարսի հայ աւետարանական համայնքները[3]: ՀԱԱՄն ամբողջովին կազմաւորուել եւ գործունէութիւն էր ծաւալում տեղացի աւետարանական ղեկավարների ուժերով ու առաջնորդութեամբ: ՀԱԱՄի անփոփոխ նախագահն էր վեր. Վահան Միքայէլեանը: 1928ին նա ձերբակալուեց Երեւանում եւ աքսորուեց Սիբիր, որտեղ էլ կնքեց իր մահկանացուն: Միքայէլեանը Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանի շրջանաւարտներից էր[4]:

Ըստ 1920ի «թռուցիկ»[5] ցուցակագրութեան, ՀԱԱՄի անդամների թիւը Երեւանում, Վաղարշապատում, Գիւմրիում, Ղարաքիլիսայում, Նոր Բայազէտում, Ղամարլուում (Արտաշատ), Նախիջեւանում եւ շրջաններում հասնում էր մօտ 1000ի, որոնցից հաղորդական անդամները՝ մօտ 200 էին: Համայնքի եկեղեցիները երկու տեսակ էին՝ ա) կազմակերպեալ եւ բ) անկազմակերպ[6]: Ըստ ՀԱԱՄի 1922ին պատրաստած տեղեկագիր-վիճակացոյցի, աւետարանական համայնքների տարածման շրջանակը հիմնականում ընդգրկում էր Երեւան, Էջմիածին, Գիւմրի քաղաքները եւ նրանց շրջակայ գիւղերն ու աւանները: Վիճակացոյցում տրուած է նաեւ հայ աւետարանական գործիչների ցանկը: Չորս ձեռնադրեալ հովիւներն էին՝ Վահան Միքայէլեանը, Սարգիս Լեւոնեանը, Յովհաննէս Բզնունին եւ Արսէն Կէօրկիզեանը[7]: Քարոզիչներն էին Տիտոս (Տիտղոս) Մանուկեանը, Սուրէն Աւետիս-

---

[3] Ա. Ղազարեան, «Հայ աւետարանական համայնքներն Արեւելեան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կէսին--20-րդ դարի սկզբին», *Պատմութիւն եւ քաղաքակաութիւն գիտական հանդէս*, Երեւան, 4:2020, էջ 84:

[4] Վ. Միքայէլեանի մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Ա. Ղազարեան, Ռ. Լեւոնեան, *Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի (Հայաստան-Կովկաս)*, Երեւան, «Հայկական Հանրագիտարան» հրատ., 1999, էջ 154-55:

[5] Այսինքն՝ նախնական, ոչ-ամբողջական եւ ոչ-վերջնական:

[6] ՀԱԱ, ֆ. 1562, ց. 1, գ. 1, թ. 2 (1922 թ.):

[7] Վեր. Բզնունու մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Ա. Ղազարեան, Ռ. Լեւոնեան, էջ 156-7: Վեր. Լեւոնեանը 1890-1900ականներին եղել է Կարսի հայ աւետարանա-

եանը, յիսնապետ Սարգիս Սարգսեանը, Եփրէմ Մկրտչեանը, Ցոլակ Պապիկեանը, Աշոտ Մելիքսարգսեանը, Արսէն Խաչիկեանը եւ Յակոբ Մուդոյեանը: Հայ աւետարանականների ընդհանուր թիւը շուրջ 1100 էր, իսկ հաղորդական անդամներինը՝ 180 (110 արեւելահայ եւ 70 արեւմտահայ), կային վեց կազմակերպուած եկեղեցի եւ չորս կարեւոր համայնքներ: 1921ին բոլոր վայրերում միասին 29 նոր հաղորդական անդամներ են ընդունուել հաւատքի դաւանութեամբ[8]:

Ըստ ՀԱԱՄի կենտրոնական խորհրդի նախագահ Միքայէլեանի 1923 Մայիսին Անդրկովկասում աւետարանական քրիստոնեաների (մկրտչականների)[9] համառուսաստանեան խորհրդի լիազօր ներկայացուցիչ Եոսիֆ (Յովսէփ) Մակարի Խանոյեանին ներկայացրած ցուցակի, ՀԱԱՄի եկեղեցիների հաղորդական անդամները 144 հոգի էին (100 ընտանիք), որոնցից՝ 68ը՝ Երեւանի եկեղեցու անդամներն էին (50 ընտանիք), 4ը՝ Էջմիածնի (2 ընտանիք), 26ը՝ Սամաղար (այժմ՝ Գեղակերտ) գիւղի (16 ընտանիք), 2ը՝ Քէօրփալու (այժմ՝ Արշալոյս) գիւղի (2 ընտանիք), 16ը՝ Հաջիղարա (այժմ՝ Լեռնապատ) գիւղի (10 ընտանիք), 6ը՝ Ֆրանգանոց (այժմ՝ Ամբերդ) գիւղի (4 ընտանիք), 6ը՝ Կոշ գիւղի (4 ընտանիք), 6ը՝ Ղամարլուի շրջանի (6 ընտանիք), 10ը՝ Նոր Բայազէտ քաղաքի (6 ընտանիք): Ցուցակում ասւում է, որ եթէ հաշուենք իւրաքանչիւր ընտանիքում միջին հաշուով 5 շունչ, ապա ՀԱԱՄի համայնքի 9 վայրերում հաւատացեալների թիւը եկեղեցու անդամների ընտանիքների հետ միասին կազմում է 500 մարդ[10]:

Արխիւային վաւերագրերից մէկը, «Հայ աւետարանական-բողոքականների ցուցակ» անուան ներքոյ ներկայացրել է 1925ի տուեալներ Գիւմրու, Երեւանի եւ Էջմիածնի գաւառներում հայ աւետարանականների թուի, ղեկավարների եւ աղօթատների քանակի մասին: Ըստ այդ ցուցակի, Գիւմրու գաւառում կար 55 հաւատացեալ, 5 ղեկավար, 1 աղօթատուն, Երեւանի գաւառում՝ 220 հաւատացեալ, 5 ղեկավար (աղօթատունը պետութիւնը առգրաւել էր), Էջմիածնի գաւառում՝ 270 հաւատացեալ, 5 ղեկավար, 2 աղօթատուն: Այսպիսով, հաւատացեալների ընդհանուր թիւը 545 էր, ղեկավարներինը՝ 15, աղօթատները՝ 3ն էին: Նաեւ ասւում է, որ այնտեղ, որտեղ չկան աղօթատներ, հաւատացեալները հաւաքւում են ղեկավարների բնակարաններում[11]: Պէտք է հաւաստել, որ այսեղ նշուած է միայն հաղորդական անդամների թիւը, քանի որ մեր ձեռքի տակ եղած արխիւային փաստաթղ-

---

կան եկեղեցու քարոզիչը, իսկ 1920ականներին քարոզել է Ալեքսանդրապոլի գիւղերում: Վեր. Կէօրկիզեանը եղել է Ալեքսանդրապոլի հայ աւետարանական եկեղեցու քարոզիչը, պաշտօնավարել եւ աշխատել է Ամերկոմում:

[8] Եղիա Քասունի, *Լուսաշաւիղ. պատմութիւն հայ աւետարանական շարժման. 1846-1946*, տպ. Շնորհօքեան, Պէյրութ, 1947, էջ 458:

[9] Ռուսաստանի աւետարանական քրիստոնեաները մկրտչականներ էին:

[10] ՀԱԱ, ֆ, 1, ց. 3, գ. 230, թ. 9:

[11] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 132, թ. 17:

թերը վկայում են այդ շրջանում եւ դրանից վաղ անհամեմատ աւելի մեծ թուով աւետարանականների գոյութեան մասին: Այսպէս, «Խորհրդային Հայաստանի ներքին հակայեղափոխութեան, բանդիտիզմի եւ սպեկուլիացիայի (շահադիտութիւն, չարաշահում – Ա.Ղ.) դէմ պայքարի Արտակարգ Յանձնաժողով»ը (Չեկա) իր 1924 Ապրիլի 5ի «խիստ գաղտնի» թիւ 6 զեկուցագրում նշում է, որ ՀԱԱՄի համայնքի կենտրոնական խորհրդի 1919ի վիճակագրութեամբ անդամների թիւը 3000 է (հաղորդական եւ ոչ-հաղորդական անդամները, յարողները, համակիրները ներառեալ), բայց աւելացնում, որ ներկայումս այն միքանի տոկոսով կարող է աւելի շատ լինել[12]: Արխիւային մէկ այլ փաստաթղթի տուեալով 1927ին Հայաստանում աւետարանականների թիւը 5000 է, իսկ Երեւանի գաւառում՝ 800, իր 13 գիւղական համայնքներով: Երեւանում կար մէկ համայնք[13]:

ՀԱԱՄի «Կրօնական սահմանադրութեան» նախագիծը դեռեւս անտիպ (ինչպէս նշուած է արխիւային փաստաթղթում՝ ձեռագիր) համայնքի խորհրդի նախագահ վեր. Միքայէլեանի ստորագրութեամբ Խորհրդային Հայաստանի ներքին գործերի ժողկոմ է ներկայացուել 1922 Դեկտեմբեր 12ին[14], իսկ 1923 Դեկտեմբեր 23ին Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը վաւերացրել է այն, որը տպագրուել է նոյն թուականին[15]:

ՀԱԱՄ համայնքի կենտրոնը գտնւում էր Երեւանում: Ղեկավար մարմինը կենտրոնական խորհուրդն էր, որը բաղկացած էր 7 անդամից.- Վահան Միքայէլեան (կենտր. խորհրդի նախագահ), Յովհաննէս Բզնունի (փոխնախագահ), Սարգիս Սարգսեան (քարտուղար), Տիտղոս (Տիտոս) Մանուկեան (անդամ եւ Սամաղարի համայնքի ներկայացուցիչ), Ցոլակ Պապիկեան (անդամ եւ Գիւմրու համայնքի ներկայացուցիչ), Սահակ Մկրտչեան (ազատ անդամ), Մարտիրոս Տէրյակոբեան (գտնւում էր Թիֆլիսում): Կենտր. խորհրդին կից գործում էին.- 1) Հոգաբարձուների խորհուրդը, 2) Բարեգործական յանձնաժողովը, 3) Արտաքին պրոպագանդայի յանձնաժողովը, 4) Ներքին պրոպագանդայի յանձնաժողովը, 5) Ընկերակցութիւնների յանձնաժողովը, 6) Կիրակնօրեայ դպրոցների յանձնաժողովը, 7) Պաշտօնական քարոզիչների յանձնաժողովը:

Բացի պաշտօնական քարոզիչներից, կային նաեւ ոչ-պաշտօնական 15 քարոզիչներ: Կենտրոնական խորհրդին ենթարկւում էին բոլոր խորհուրդներն ու յանձնաժողովները, ինչպէս նաեւ բոլոր աւետարանական համայնքները: Ոչ-ամբողջական կազմակերպուած համայնքներ կային Լօռի-Փամբակի եւ Ներքին Բայազէտի գաւառներում[16]:

---

[12] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 13 շրջ.:
[13] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 192, թ. 73:
[14] ՀԱԱ, ֆ. 1562, ց. 1, գ. 1, թ. 1-4:
[15] Վ. Միքայէլեան, *Կրօնական սահմանադրութիւն հայ աւետարանականաց Արարատեան համայնքի*, Երեւան, 1923:
[16] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 13 շրջ.:

Չեկայի վերոյիշեալ թիւ 6 զեկուցագրում ասւում է, որ ՀԱԱՄը Հայաստանից դուրս պաշտօնական ներկայացուցիչներ չունի, բայց սերտ կապեր ունի Ամերիկայի հայ աւետարանականների հետ[17]: Այս առումով հետաքրքիր է ՀԱԱում պահպանուած Միքայէլեանի նամակագրութիւնը ԱՄՆի հայ աւետարանականների հետ: Նա կապեր է ունեցել դեռեւս 1902ին ԱՄՆում (Ուստրում) ստեղծուած հայ աւետարանականների հայկական միութեան (նախագահ՝ Գ. Պետրոսեան, փոխնախագահ՝ Բ.Ս. Լեւոնեան) հետ: 1923ին Պետրոսեանը ԱՄՆից Միքայէլեանին գրած նամակում ցանկանում էր իմանալ, թէ ինչ կարծիք ունի այն մասին, որ Հայաստան ուղարկեն մարդկանց՝ եկեղեցու ամրապնդման եւ որպէս Աւետարանի ծառայող աշխատելու համար: Նա առաջարկում էր նաեւ նիւթական օգնութիւն նրանց, ովքեր աշխատելու են տեղերում: Պետրոսեանը գրում էր, որ յառաջիկայ ժողովի առիթով Ամերիկայի հայ աւետարանականների միութիւնը խնդիր է դրել տեղեկութիւններ հաւաքել աշխարհասփիւռ աւետարանականների, այդ թւում՝ Հայաստանի եկեղեցիների մասին: Վերջում յիշեցնում է, որ Երեւանի աւետարանականներից շատերը վանեցիներ են, ինչպէս ինքը[18]:

1923 Օգոստոսի 30ին Միքայէլեանը ԱՄՆի հայ աւետարանականներին գրած իր նամակում տեղեկացրել է Երեւանի աւետարանականների համայնքում տիրող իրավիճակի մասին: Նա յայտնում է, որ աւետարանական քարոզչութիւնը շարունակւում է մեծ թափով, չնայած տիրող իրավիճակին, եւ՝ որ աւետարանական եկեղեցին ընդունել է 136 անդամ ինչպէս տեղացիներից, այնպէս էլ՝ գաղթականներից[19]:

Մէկ այլ արխիւային փաստաթղթում՝ 1923 Օգոստոսի 10ի Չեկայի թիւ 3 «խիստ գաղտնի» զեկուցագրում, խօսւում է Հայաստանի աւետարանականների՝ Ամերիկայի իրենց հաւատակիցների հետ կապի մասին: Ասում է, որ նրանք Ամերիկայից ստանում են նամակներ, թերթեր, դրամ: Այդ կապն ապահովում էր վեր. Միքայէլեանը, որը նամակագրութիւն ունէր ԱՄՆի հայ աւետարանականների հայկական միութեան հետ, նրանցից խնդրում էր Հայաստան ուղարկել գրականութիւն, քարոզիչներ, նիւթական միջոցներ[20]:

---

[17] Նոյն:

[18] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 28-28 շրջ.:

[19] Նոյն, թ. 30:

[20] Նոյն, թ. 37 շրջ :

ՀԱԱՄը սերտ կապեր ունէր Ամերկոմի[21] եւ ամերիկեան Բորդ միսիոնարական ընկերութեան հետ[22]: Այդ աշխատանքը տարւում էր 1919ից Ամերկոմի Հայաստանի ներկայացուցիչ վեր. Հարիսոն Մէյնարտի միջոցով, որը հայ աւետարանականների շրջանում շարունակում էր իր աշխատանքը Բորդի լուծարումից յետոյ[23]: Նոյն աղբիւրը յայտնում է, որ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատուելուց յետոյ ՀԱԱՄն ուժեղացրել է իր գործունէութիւնը, որը պայմանաւորուած էր խորհրդային իշխանութիւններից կուլակների եւ թուրքահայ փախստականների դժգոհութեամբ, ինչպէս նաեւ՝ հայ առաքելական հոգեւորականութեան «քաոսային» դրութեամբ[24]:

Արխիւային վաւերագրերը տեղեկութիւններ են հաղորդում Թիֆլիսից, Բաքուից, Բաթումից եւ այլ վայրերից Հայաստան այցելած աւետարանա-

---

[21] Մերձաւոր Արեւելքում Ամերիկեան Նպաստամատոյց Կոմիտէ (American Committee for Relief in the Near East, կրճատ՝ Նպաստամատոյց կամ Ամերկոմ, NER): Ամերիկեան բարեգործական հաստատութիւն, որը ստեղծուել է 1916ին Մերձաւոր Արեւելքի երկրների պատերազմից տուժած բնակչութեանը օգնելու նպատակով: Հայաստանի կառավարութեան հետ կնքուած համաձայնագրով 1919 Մայիսի 1ից Հայաստանում եւ Վրաստանում գտնուող բոլոր որբանոցները եւ մանկական հիւանդանոցները փոխանցուեցին Ամերկոմին: 1923ին սահմանափակուեց Ամերկոմի գործունէութիւնը եւ հսկողութիւն սահմանուեց նրա աշխատակիցների, Բորդ ընկերութեան միսիոնարների, Ամերկոմի հետ համագործակցող հայ աւետարանականների վրայ: Նպաստամատոյցում պաշտօնավարել եւ աշխատել են բազմաթիւ հայ աւետարանական ղեկավար գործիչներ, որոնք եղել են թարգմանիչներ, տեսուչներ, տարբեր յանձնախմբերի ղեկավարներ, քարոզիչներ եւ աւետարանիչներ Ալեքսանդրապոլի ամերիկեան որբանոցներում: Խորհրդային Հայաստանի եւ Նպաստամատոյցի միջեւ կնքուած համաձայնութեամբ Հայաստանում նրա գործունէութիւնը դադարեցուել է 1931 Յունուարի 1ին (աւելի մանրամասն տե՛ս՝ Ղազարեան-Լեւոնեան, էջ 172-83):

[22] Ամերիկեան Բորդի քարոզիչները դեռեւս 1870ականների վերջին Արեւմտեան Հայաստանից այցելում էին Ալեքսանդրապոլ, Կարս եւ շրջակայ գիւղեր, փորձում կազմակերպել տեղի աւետարանական համայնքները: 1916ին Բորդն իր գործունէութիւնը տեղափոխեց Արեւելեան Հայաստան եւ Կովկաս: Հայաստանում այն մինչեւ 1923 գործում էր պաշտօնապէս, նրա միսիոնարները եւ հայ աւետարանական հոգեւոր պաշտօնեաները Նպաստամատոյցի աշխատակիցներ էին, վարում էին նաեւ պատասխանատու պաշտօններ, զբաղւում որբախնամ եւ բարեգործական աշխատանքներով, օգնում հայ աւետարանական համայնքներին: Բորդի անմիջական ջանքերով եւ մասնակցութեամբ է ստեղծուել Ամերկոմը: Խորհրդային Հայաստանում Բորդի դէմ արգելքներն իվերջոյ յանգեցրեցին նրա գործունէութեան դադարեցմանը: 1923 Յունուարին փակուեց Բորդի դպրոցը, իսկ Փետրուարի սկզբին արգելուեց նրա գործունէութիւնը Հայաստանում: 1924 ամռանը վերջին միսիոնարները հեռացան Հայաստանից: Պարսկաստան արտաքսուեցին միքանի հայ աւետարանական գործիչներ, որոնք գործակցում էին Բորդի հետ:

[23] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 13-14:

[24] Նոյն:

կանների մասին, որոնք քարոզչական գործունէութիւն էին տանում բոլոր աւետարանական քրիստոնեաների միաւորման եւ մէկ միութիւն ստեղծելու համար: 1924 Փետրուար-Մարտին Հայաստան են այցելել Ռուսաստանի աւետարանականներից Խանոյեանը՝ Թիֆլիսից, Կարապետ Վարդանեանը՝ Բաթումից[25], Թառայեանը՝ Բաքուից[26]: Հայ աւետարանականների գործունէութիւնում չկարողանալով գտնել հակաօրինական որեւէ դրսեւորում, Չեկան առանց փաստերի նրանց մեղադրում էր իբր ֆաշիզմին յարելու, իտալական ֆաշիզմին հակուած լինելու[27] եւ իրենց քարոզներում ժողովրդի շրջանում ֆաշիստական տրամադրութիւններ սերմանելու մէջ[28]:

Արխիւային փաստաթղթերը հնարաւորութիւն են տալիս եզրակացնել, որ Խորհրդային Հայաստանում աւետարանականութեան տարածումը մեծ թափ է ստացել 1923ից: Չեկայի վերոյիշեալ թիւ 3 զեկուցագիրը հաստատում է, որ աւետարանականութիւնը շատ արագ տարածւում է հայ գիւղական բնակչութեան մէջ: Այն տեղի է ունենում ինչպէս բնական աճի, այնպէս էլ՝ քարոզչութեան շնորհիւ, որ ՀԱԱՄի գործուն անդամները տանում են Հայաստանի բոլոր անկիւններում, յատկապէս՝ Էջմիածնի, Գիւմրու, Երեւանի, Լոռիի գաւառներում: Նշւում է, որ աւետարանականները ՀԱԱՄի նախագահ Միքայէլեանի եւ նրա գործընկերների՝ Սարգսեանի, Բզնունու, Մանուկեանի, Անուշ Նիկողոսովայի գլխաւորութեամբ մեծ թափով քարոզչութիւն են անում՝ համալրելով համայնքը նոր անդամներով յատկապէս՝ Երեւանում, Գիւմրիում, Սամաղար, Ֆրանգանոց, Կոշ, Հաջիղարա, Քէօրփալու գիւղերում: Ասւում է, որ նրանց *պրոպագանդան* այնքան ուժեղ է եւ լուրջ, որ շատ գիւղերում ներգրաւում են կոմերիտական (համայնավար երիտասարդական միութեան անդամ) բջիջները, կոմերիտականները, կուսակցականները: Բերւում է Ֆրանգանոց գիւղի օրինակը, որտեղի կոմերիտական բջիջը լուծարուել էր կրօնական համոզմունքների պատճառով[29]:

---

[25] Նոյն, թ. 13, տես նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 23:

[26] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 36 շրջ.:

[27] Դա պայմանաւորուած է նրանով, որ 1922ին Իտալիայում իշխանութեան եկան ֆաշիստները Մուսոլինիի գլխաւորութեամբ, որոնք աննախադէպ հալածանքներ սկսեցին իտալացի համայնավարների եւ ընկերվարականների դէմ, իսկ Խորհրդային Միութեան հանդէպ վարում էին թշնամական քաղաքականութիւն: Իսկ քանի որ խորհրդային իշխանութիւնները հայ աւետարանականներին համարում էին թշնամի խորհրդային կարգերին եւ համայնավար գաղափարախօսութեանը, նրանց մեղադրում էին ֆաշիզմի մէջ, որն այդ ժամանակ շատ տարածուած էր խորհրդային երկրում:

[28] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 13-14. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 23:

[29] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 36:

Չեկայի վերոյիշեալ թիւ 6 զեկուցագիրը տեղեկութիւններ է տալիս ՀԱԱՄի 4 գլխաւոր համայնքների գործունէութեան մասին[30]: Այդ համայնքներն էին.

1. Կենտրոնական-Երեւանի համայնք,
2. Լենինականի համայնք,
3. Արարատի համայնք (Ղամարլուի տեղամաս),
4. Սամաղարի համայնք (Էջմիածնի գաւառ):

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ-ԵՐԵՒԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայ աւետարանականների ՀԱԱՄի Երեւանի համայնքի «Կրօնական կանոնադրութիւնը» Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը հաստատել է 1926 Մայիսի 20ին եւ պաշտօնապէս գրանցել նոյն թուականի Մայիսի 29ին: Կանոնադրութիւնում ասւում է, որ Երեւանի համայնքը կազմաւորուել է 1914ին եւ կազմում է ՀԱԱՄի մէկ ճիւղը, ընդունում է ՀԱԱՄի սահմանադրութիւնը, որը ՀԽՍՀ ներքգործժողկոմի կողմից հաստատուել է 1923ին[31]: Երեւանի համայնքի նախագահն էր վեր. Յովհաննէս Բզնունին, ղեկավար կազմի անդամ էին Նիկողոսեանը, Աւետիսեանը, Փ. Պետրոսեանը, Միքայէլեանը[32]: Չեկայի վերոյիշեալ թիւ 6 զեկուցագրում ասւում է, որ բողոքական շարժումը Հայաստանում աշխուժացել է, որին նպաստել են ա) հայ առաքելականների հետ հակասութիւնները Աւետարանի հասկացութեան եւ աւետարանական ուսմունքի քարոզչութեան շուրջ, բ) հայ բնակչութեան շրջանում առաքելական հոգեւորականութեան հեղինակազրկումը եւ գ) Արարատեան համայնքի կապերը Ամերկոմի հետ: Նշւում է, որ չնայած աղօթատունը վերցրել են Երեւանի աւետարանականներից, բայց նրանք աղօթաժողովներ են անում համայնքի անդամների բնակարաններում: ՀԱԱՄի կենտրոնական խորհրդի նախկին քարտուղար վեր. Յակոբ Մուդոյեանին Իրան արտաքսելուց (1924 Փետրուար) եւ նրա բնակարանը կորցնելուց յետոյ Երեւանի աւետարանականները հաւաքւում են միւս քարոզիչների տներում, որտեղ էլ կենտրոնացուած էր ամբողջ աշխատանքը, որ տանում էին Մուդոյեանի մօտ՝ Ամերկոմի հովանու ներքոյ[33]:

Երեւանի աւետարանականների աղօթատունը, որը գտնւում էր Պետկինոյի շէնքում, կառավարութիւնն առգրաւել էր[34], բայց այն վերադարձնելու հարցը դարձել էր քննարկման առարկայ, ինչն այդպէս էլ լուծում չստացաւ: Աղօթատունը վերադարձնելու որոշումները կրում էին ձեւական բնոյթ եւ չէին իրագործւում հենց խորհրդային իշխանութիւնների կողմից: Այսպէս,

---

[30] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 12-14:
[31] ՀԱԱ, ֆ. 828, ց. 1, գ. 7, թ. 1:
[32] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 229, թ. 52:
[33] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 12:
[34] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 72:

1924 Մարտի 22ի ՀԽՍՀ Կոմկուսի կենտկոմի նախագահութեան նիստում կենտկոմի նախագահութեան անդամ Ա. Շահգելդեանին պարտաւորեցրել էին երկու շաբաթուայ ընթացքում աւետարանականների համայնքին տրամադրել համապատասխան շինութիւն՝ որպէս աղօթատուն[35]: Իսկ 1924 Ապրիլի 10ի ՀԽՍՀ Կոմկուսի կենտկոմի նախագահութեան նիստում ընդունուեց «Աւետարանական քրիստոնեաներին շինութիւն յատկացնելու մասին» որոշումը (Արձանագրութիւն N46), ինչպէս նաեւ որոշուեց՝ ա) մերժել աւետարանական քրիստոնեաների համայնքի ենթակայութիւնից Պետկինոյի շէնքը առգրաւելու մասին Կենտկոմի նախագահութեան անդամ Շահգելդեանի առաջարկութիւնը, բ) յանձնարարել Երեւան քաղաքի գործկոմին շտապ կերպով համայնքի տրամադրութեան տակ դնել համապատասխան շինութիւնը, կանգ չառնելով դրանից բխող ծախսերի առաջ եւ գ) տարածքը տրամադրել համայնքին վարձակալական հիմունքներով[36]:

Ըստ Չեկայի «խիստ գաղտնի» թիւ 5 զեկուցագրի, Երեւանի, ընդհանրապէս հայ աւետարանականների ամենայայտնի եւ «խիստ վտանգաւոր» ներկայացուցիչը ՀԱԱՄի կենտրնական խորհրդի նախկին քարտուղար վեր. Մուդոյեանն էր[37], ով ամերիկեան Բորդի նախկին նախագահ, Երեւանում Ամերկոմի ներկայացուցիչ վեր. Մէյնարտի թարգմանիչն էր: Մուդոյեանի բնակարանը 1923ից, երբ կառավարութիւնը Երեւանի աւետարանականներից վերցրել էր աղօթատունը, դարձել էր նրանց գլխաւոր հաւաքատեղին եւ աղօթատունը: Մուդոյեանի բնակարանը ծառայում էր որպէս գլխաւոր հաւաքատեղի, որտեղ այցելում էին Հայաստանի բոլոր շրջանների համայնքների ներկայացուցիչները եւ ստանում տարբեր յանձնարարութիւններ, գրականութիւն, կրօնական նկարներ եւն.: Այդ հաւաքներին մասնակցում էր նաեւ Մէյնարտը, որը նրանց տալիս էր արտասահմանեան կրօնական թերթեր, հանդէսներ: Երեւանում աշխուժ գործունէութիւն էին ծաւալում Մուդոյեանի եղբայր Գարեգին Մուդոյեանը, Արբակ Մարտիրոսեանը, Շահբօղլեանը եւ ուրիշներ[38]: Մուդոյեանի արտաքսումից եւ նրա բնակարանի առգրաւումից յետոյ, Երեւանի աւետարականներն աղօթաժողովներ էին անում Միքայէլեանի տանը՝ 2րդ Գնունի փ., 17ա հասցէում, որը պաշտօնապէս գրանցուած էր որպէս Երեւանի համայնքի աղօթարան[39]:

Արխիւային վաւերագրերը վկայում են, որ Երեւանի համայնքում 1923ից շատ եռանդուն աշխատանք է տարւում, ընդ որում ոչ միայն իրենց աղօթատներուն, այլ նաեւ՝ դրանցից դուրս, յատկապէս կանանց եւ երեխաների շրջանում: Այդ առումով աչքի էր ընկնում Անուշ Նիկողոսովան, որն աւետա-

---

[35] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 10, թ. 23:
[36] Նոյն, թ. 24:
[37] Մուդոյեանի մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Ղազարեան-Լեւոնեան, էջ 158-59:
[38] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 4:
[39] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 229, թ. 52:

ռանականութեան տարածման նպատակով շրջում էր բակերով, յորդորում ծանօթներին, որոնք աւետարանականներ չեն՝ լսեն աւետարանականների քարոզները: Հաւաքները տեղի էին ունենում բաց տարածքներում կամ մասնաւոր բնակարաններում[40]: 1923ին ներքգործժողկոմը Երեւանի աւետարանական հինգ շրջիկ քարոզիչներին՝ Միքայէլեանին, Բզնունուն, Մանուկեանին, Սարգսեանին եւ Աւետիսեանին, թոյլատրել էր առանց խոչընդոտների գիւղերում կատարել կրօնական քարոզչութիւն[41]: Երեւանում Միքայէլեանի քարոզների ժամանակ ներկայ էին լինում աւելի քան 200 հաւատացեալներ[42]:

Մինչեւ Խորհրդային Հայաստանում ՀԱԱՄի գործունէութեան արգելումը Երեւանի աւետարանականների մասին վերջին յիշատակումներից մէկը վերաբերում է 1927ին: Արխիւային փաստաթղթում ասւում է, որ 1927ին հայ աւետարանական համայնքը իրեն կից Երեւանում ստեղծում է երիտասարդական եւ կանանց բջիջներ: Երեւանում կայ մէկ համայնք, իսկ Երեւանի գաւառում՝ 13 գիւղական համայնքներ: Գիւղերում համայնքի ժողովները լինում են շաբաթը մէկ անգամ, իսկ Երեւանում՝ երկու, երբեմն՝ մէկ անգամ: Արարողութիւնները լինում են Աւետարանի շուրջ՝ պատուելիների կողմից, քարոզներով եւ երգեցողութեամբ: Երեւանում հաւաքները լինում են մասնաւոր տներում, ծիսակատարութիւնը կատարւում է երգեհոնով եւ գրամաֆոնով: Սեփական նիւթական միջոցները գոյանում են անդամավճարներից եւ կամաւոր նուիրատուութիւններից: Ամէն հաւատացեալ անդամավճար է տալիս ամսական 50 կոպէկ: Նիւթական միջոցները ստացւում են Ամերիկայից՝ միսիոնարների միջոցով, քարոզիչները վճարւում են, գնւում են երաժշտական գործիքներ, տպագրւում կտակարաններ, Աւետարաններ, որոնք բաժանւում են համայնքի անդամներին: Փաստաթղթում ասւում է, որ հայ աւետարանականներն ընդունակ են իրենց կողմը գրաւել նոր հաւատացեալների, մանաւանդ, երբ փակւում են գիւղական եկեղեցիները եւ հաւատացեալ գիւղացիները սկսում են դառնալ բողոքական համայնքների համակիրներ[43]:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ-ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ

1920ականներին Գիւմրու եւ շրջակայ գիւղերի աւետարանական համայնքների, քարոզիչների, նրանց ծաւալած գործունէութեան մասին արխիւային նիւթերը հարուստ տեղեկութիւններ են հաղորդում, նշելով տեղի բոլոր քարոզիչների եւ ղեկավարների անունները:

---

[40] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 37:
[41] Նոյն, թ. 72:
[42] Նոյն, թ. 72 շրջ.:
[43] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 192, թ. 73:

Չեկայի վերոյիշեալ թիւ 6 զեկուցագիրը հաղորդում է, որ 1921ի սկզբից մինչեւ 1922ի սկիզբը Ալեքսանդրապոլի համայնքը կազմաւորման փուլում էր եւ չկային ղեկավար կադրեր, որ կարողանային իրականացնել կենտրոնական խորհրդի առաքելութիւնը տեղի համայնքում: 1923ից, երբ Ամերկոմի բոլոր բաժանմունքները կենտրոնանում են Ալեքսանդրապոլում եւ սկսում են նիւթական օգնութիւն ցոյց տալ համայնքի անդամներին, Ալեքսանդրապոլի համայնքի գործունէութիւնն աշխուժանում է: Դա նպաստաւոր պայմաններ է ստեղծում լաւ պատրաստուած քարոզիչների աշխատանքի համար, որոնք ուժեղացնում են քարոզչութիւնը աւետարանականների շրջանում՝ կոչ անելով ամրապնդել հաւատացեալ քրիստոնեաների շարքերը: Ալեքսանդրապոլում աղօթաժողովներին մասնակցում էր միջինը 70 մարդ[44]: Մէկ այլ փաստաթղթում նշւում է, որ աղօթաժողովներից մէկի ժամանակ տեղի քարոզիչներ Աբգար Մելիքջանեանը եւ Մեսրոպը առաջարկութիւն են արել ընդլայնել տեղի համայնքի գործունէութիւնը եւ ընդգրկել նոր անդամներ, կոչ անելով չվախենալ իշխանութիւնների հետապնդումներից, լինել խիզախ եւ անդրդուելի: Որպէս եզրայանգում, ասւում է, որ շնորհիւ այդպիսի ջանքերի եւ աշխատանքի, հաւատացեալների թիւն աւելանում է[45]: 1923ին Ալեքսանդրապոլում ստեղծուել էր տեղի համայնքի գործուն անդամների յատուկ միութիւն, որի նպատակն էր աշխուժացնել համայնքի կեանքը: Այդ նախաձեռնութիւնը գալիս էր կենտրոնից, այսինքն՝ Երեւանից եւ Անդրկովկասում աւետարանական քրիստոնեաների համառուսաստանեան խորհրդի լիազօր ներկայացուցիչ Խանոյեանից[46]: Նոյն փաստաթղթում ասւում է, որ չնայած Ալեքսանդրապոլի համայնքը կոչւում է «Հայկական», նրանք աշխատում են նաեւ ռուս հաւատացեալների շրջանում, որոնց թոյլ են տալիս իրենց հաւաքների ժամանակ աղօթել եւ ընթերցել գրքեր ռուսերէն լեզուով: Ըստ Չեկայի գաղտնի զեկուցագրի, դա բացատրւում էր նրանով, որ Ալեքսանդրապոլի բողոքականներն աւելի շատ յարում էին մկրտչականներին եւ գտնւում էին Թիֆլիսի մկրտչական համայնքի անմիջական ազդեցութեան ներքոյ: Ռուս հաւատացեալների թիւը հասնում էր 20ի, որոնց գլուխ կանգնած էր Ալեքսանդրապոլի *դեպոյ*ի (շոգեքարշերի եւ վագոնների նորոգման կայան երկաթուղիներում) բանուոր, քարոզիչ Դմիտրի Վինուժդենկօն[47]: Վերջինս նշուած է Ալեքսանդրապոլի գաւառի աւետարանական ղեկավարների շարքում Աբրահամ (Աբգար) Մելիքջանեանի, Յոլակ Պապիկեանի, Մեսրոպ Աւետիսեանի, Խանոյեանի հետ միասին[48]: Ալեքսանդրապոլում ուժեղանում էր կրօնական քարոզչութիւնը, իսկ

---

[44] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 12-12 շրջ.:
[45] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 36 շրջ.:
[46] Նոյն:
[47] Նոյն, թ. 37:
[48] Նոյն, թ. 72 շրջ.:

համայնքին օգնում էր Բաքուից եկած աւետարանական Թառայեանը: Նա Ալեքսանդրապոլում մնացել էր 2 շաբաթ եւ Գերմանիայից եկած բողոքական Արմենակ Պարոնիկեանի հետ ամէն օր անց էր կացնում աղօթաժողովներ: Վերջինս, որպէս Գերմանիայի եւ Զուիցերիայի հայերի բարեգործական ընկերութեան պատգամաւոր, Հայաստան էր եկել Հայաստանի օգնութեան ընկերութեան համագումարին մասնակցելու[49]: Գիւմրու համայնքը, բացի Երեւանից, անմիջական կապեր ունէր Թիֆլիսի հետ, որտեղից այցելում էին թիֆլիսեան քարոզիչներ Խանոյեանը, Մեսրոպ Աւետիսեանը՝ նրանց շրջանում կրօնական քարոզչութիւն տանելու եւ տեղի աւետարանականների աշխատանքին ծանօթանալու համար: Ալեքսանդրապոլի համայնքը, բացի քաղաքից, զգալի թուով անդամներ ունէր նաեւ շրջակայ գիւղերում՝ Կուլիջանում (այժմ՝ Սարահարթ) եւ Խանլիճանում (այժմ՝ Մարմաշէն), որոնց շրջանում տարւում էր որոշակի կրօնական աշխատանք[50]: Կուլիջան գիւղում 1924ի տուեալներով կար 25 աւետարանական[51]:

Ալեքսանդրապոլի համայնքում աւետարանական գործի յաջողութիւնը Խորհրդային Հայաստանի իշխանութիւնները բացատրում էին հիմնականում Ամերկոմի հետ սերտ կապերով եւ համագործակցութեամբ, ինչպէս նաեւ՝ Ամերկոմի միսիոնարների եռանդուն գործունէութեամբ: Ալեքսանդրապոլի Ամերկոմում կային յատուկ աղօթատեղիներ, որտեղ հայ աւետարանական քարոզիչները՝ Մանուկեանը, Շահբօղլեանը, Պապիկեանը եւ ուրիշներ, ամերիկացի միսիոնարների հետ երեխաների, որբերի եւ ծառայողների շրջանում անց էին կացնում աղօթաժողովներ: Ամերկոմից տեղացի քարոզիչները ստանում էին թռուցիկներ, դիմումներ, նամակներ, որոնցում նրանց կոչ էր արւում կազմակերպուել եւ Հայաստանում ստեղծել տարբեր կրօնական խմբեր[52]:

Ամերկոմի հետ համագործակցում էին Մելիքջանեանը, որը քարոզչութիւն էր անում Կազաչի Պոստի ամերիկեան որբանոցներում, Ռաֆայէլ Մելիքադամեանը[53] եւ Պապիկեանը (Պոլիգոնի որբանոցներում), Սուրէն Հայրէդեանը եւ Մուշեղ Սահակեանը՝ նորվեգացի միսիոնարուհի Բոնդէի որ-

---

[49] Նոյն:

[50] Նոյն, թ. 37:

[51] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 65, թ. 81:

[52] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 73:

[53] Մինչեւ 1907, նա Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետ էր՝ հայր Մամբրէ անունով, աւարտել է Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանը, դասաւանդել նոյն ճեմարանում, ուսանել Գերմանիայի համալսարաններում, եղել Լենինականի հայ մկրտչականների համայնքի ղեկավար եւ քարոզիչ (առաւել մանրամասն տե՛ս՝ Ստեփան Կերտող, *Գիրք փառապելոց. 1920-1950ական թուականների բռնութիւնների զոհ հայ հոգեւորականները*, «Մուղնի» հրատ., Երեւան, 2002, էջ 211-220. նաեւ՝ Ստեփան Ստեփանեանց, *Հայ Առաքելական Եկեղեցին ստալինեան բռնապետութեան օրոք*, «Ապոլոն» հրատ., Երեւան, 1994, էջ 45-46, 112):

բանոցում[54], ինչպէս նաեւ՝ Սուրէն Խանգելդեանը, Ամերկոմի Ալեքսանդրապոլի ներկայացուցիչ միսիոնար Պատրիչը[55]: 1923ին Ալեքսանդրապոլում եռանդուն քարոզչական աշխատանք էր տարւում նաեւ ամերիկացի միսիոնար Օգդէնի եւ Մելիքադամեանի գլխաւորութեամբ: Զեկուցագրերից մէկում ասւում էր, որ Ալեքսանդրապոլի աւետարանական համայնքը ֆինանսաւորւում է ամերիկացիների կողմից, քարոզիչների մեծ մասը եւ ընդհանրապէս՝ հաւատացեալները մեծմասամբ ծառայում են Ամերկոմում, որը մեծ յարգանք է վայելում ինչպէս աշխատակիցների, այնպէս էլ՝ որբերի շրջանում[56]:

ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔ (ՂԱՄԱՐԼՈՒԻ ՏԵՂԱՄԱՍ)

Երեւանի գաւառի Ղամարլուի (Արտաշատ) համայնքի կենտրոնը Արտաշատ գիւղն էր, որտեղ էլ գտնւում էր շրջանային աղօթատունը: 1924ի տուեալներով հաղորդական անդամների թիւը հասնում էր 40ի, իսկ ոչ-հաղորդականներինը՝ 100ի: Համայնքի ղեկավարը Արշակ Տէրստեփանեանն էր, որը ժամանակաւորապէս բնակւում էր Արտաշատում: Նա սերտ կապեր ունէր ՀԱԱՄի կենտրոնական խորհրդի եւ Ամերկոմի հետ՝ իդէմս Մէյնարտի[57]: Դեռեւս 1923 Յուլիսին մի խումբ արտաշատցիներ դիմել էին կենտրոնական խորհրդին, խնդրելով իրենց մօտ ուղարկել մէկ յատուկ ղեկավար-քարոզիչ՝ համայնքի աշխատանքն աշխուժացնելու համար, ինչպէս նաեւ ցոյց տալ նիւթական օգնութիւն: Նրանք խնդրում էին նաեւ բացել կիրակնօրեայ դպրոց[58]: Կենտրոնական խորհուրդը համայնքն ամրապնդելու նպատակով Ղամարլուի տեղամաս է ուղարկում քարոզիչներ Սարգսեանին, Աւետիսեանին եւ Բզնունուն: Քանի որ բացի Տէրստեփանեանից այնտեղ չկային աչքի ընկնող աշխատակիցներ, իշխանութիւնները մտադիր էին մեկուսացնել միայն նրան[59]: ՀԱԱՄի կենտրոնական խորհուրդը Արտաշատի եւ Ղամարլուի շրջանների բոլոր համայնքների ղեկավար է նշանակել Բզնունուն[60]:

Քանի որ Ղամարլուում շատ էին արեւմտահայ գաղթականները, յատկապէս այստեղ յատուկ աշխատանք էր տարւում նրանց շրջանում: 1923ի գաղտնի զեկուցագրերից մէկում ասւում է, որ քարոզիչ Մարիանա Նիկողոսեանին աքսորելուց յետոյ նրա տեղը զբաղեցրեց Սալմաստից գաղթած Արմենակ Տէրսիմոնեանը, որը կարճ ժամանակում ձեռք բերեց մեծ յարգանք եւ ժողովրդականութիւն յատկապէս թուրքահայ գաղթականների

---

[54] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 14:
[55] Նոյն, թ. 4 շրջ.:
[56] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 37 շրջ.:
[57] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 12 շրջ.:
[58] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թթ. 31, 36 շրջ.:
[59] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 12:
[60] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 73:

շրջանում: Մեծ ուշադրութիւն էր դարձուում Երեւանի գաւառի Արտաշատ եւ Դարղալու (այժմ՝ Այգեզարդ) գիւղերի բնակչութեանը: Նոյն զեկուցագրում ասւում է, որ այդ համայնքներում անդամագրւում են հաւատացեալներ, որոնք նախկին դաշնակցականներ էին, իսկ համայնքի անդամներ Արտուշ Բաղալեանը, Արսէն Յակոբեանը, Խաչատուր Յակոբեանը եւ Արտաշատի այլ բնակիչներ, զուգահեռաբար գաղտնի աշխատանք էին տանում դաշնակցութեան օգտին[61]:

ՍԱՄԱՂԱՐԻ ՀԱՄԱՅՆՔ (ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՒԱՌ)

Էջմիածնի գաւառի Սամաղար համայնքը, ըստ Չեկայի վերոյիշեալ թիւ 6 զեկուցագրի, ամենաուժեղ աւետարանական համայնքներից էր: Դա բացատրւում է նրանով, որ Սամաղարը եղել է Արեւելեան Հայաստանում աւետարանականութեան սկզբնաւորման օջախը, նաեւ այն հանգամանքով, որ Էջմիածնի գաւառի բնակչութեան շրջանում հեղինակազրկուել էր հայ առաքելական հոգեւորականութիւնը: Այս հանգամանքները պարարտ հող են ստեղծել աւետարանականութեան տարածման, որն, ըստ զեկուցագրի, առանձնապէս ուժեղացել է 1924ին: Կենտրոնական խորհրդի քարոզիչներն այցելում էին ոչ միայն այն գիւղերը, որտեղ կային աւետարանական համայնքներ, այլեւ այնտեղ, որտեղ չկային: Երբ ներքգործժողկոմը թոյլատրեց բաց քարոզչութիւնը, աւետարանականներն աշխուժացրեցին իրենց ազդեցութիւնը բնակչութեան վրայ ամբողջ շրջանում: Նշւում է, որ աւետարանականների ազդեցութեան տակ էին ընկնում նաեւ համայնավարները, որոնք հեռանում էին կուսակցութիւնից եւ դառնում աւետարանականներ: Դա եղել է յատկապէս Ֆրանգանոց եւ Սամաղար գիւղերում[62]: Աւետարանականութիւնը մեծ տարածում ունէր Էջմիածնի գաւառի նաեւ Քէօրփալու, Կոշ եւ այլ գիւղերում, Վաղարշապատ քաղաքում: Սամաղարի գիւղկոմբջջի հաշուետուութիւնները, Սամաղարի կուսշրջկոմի անդամական ժողովների արձանագրութիւնները հաստատում են, որ 1924-27՝ գիւղում գործել է աւետարանական աշխուժ խմբակ, ունեցել են աւետարանական քարոզիչներ, ժողովարան, որը գործել է միայն տօն օրերին, իսկ աւետարականները գաղտնի հաւաքւում էին իրենց տներում[63]: Իսկ ըստ Կոմկուսի Սամաղարի շրջկոմի վարչական ժողովի 1927ի Հոկտեմբերի 8ի նիստի արձանագրութեան, կրօնական համայնքի անդամ գրուող կոմերիտականների դէմ ձեռնարկւում է հակակրօնական քարոզչութիւն, որի նպատակով Սամաղարում կազմակերպուել է անաստուածների խմբակ, խրճիթներին կից կազմակեր-

---

[61] Նոյն, թ. 36 շրջ.:

[62] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 13:

[63] ՀԱԱ, ֆ. 1453, ց. 1, գ. 2, թթ. 2-3ա, 6-7ա, 18-19ա, 27-28ա, 36-37ա, 56-57ա, 80-81ա, 150-150ա:

պուել են բանգիտական զրոյցներ[64]: Էջմիածնի գաւառում աշխուժ աշխատանք էին տանում Բենիամին Քոչարեանը, Տիտղոս Մանուկեանը, Սահակ Մկրտչեանը, Եփրէմ Մկրտչեանը[65], իսկ որպէս Էջմիածնի գաւառի աւետարանական ղեկավարներ յիշատակւում են Բ. Քոչարեանը, Յովհաննէս Իսրայէլեանը եւ Մանուկեանը: Տեղի աւետարանականներին Երեւանից յաճախ էին այցելում քարոզիչներ Լեւոն Սարգսեանը, Բզնունին[66]: Վաղարշապատում քարոզել է նաեւ ՀԱԱՄի կենտրոնական խորհրդի քարտուղար, յիսնապետ Սարգիս Սարգսեանը[67]:

1926ին միայն Երեւանում եւ Էջմիածնում ու նրանց շրջակայ գիւղերում կային ՀԱԱՄի 10 աւետարանական համայնքներ: Կառավարական տոմարում նշուած է նրանց գրանցման եւ կանոնադրութիւնների հաստատման ամսաթիւը, ղեկավարների ազգանունները, աղօթատների վայրը, բայց աւետարանականների թուի վերաբերեալ տուեալներ չեն հաղորդւում[68]: Իսկ 1927ին նշուած գաւառներում արդէն կային 11 աւետարանական համայնքներ[69]:

ՀԱԱՄի ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՅԼ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ

Խորհրդային Հայաստանի Չեկայի գաղտնի զեկուցագրերում յաճախ է շեշտւում, որ ՀԱԱՄը եւ հայ աւետարանական ղեկավար գործիչները կապեր ունեն Ամերկոմի, ամերիկեան Բորդի, Ամերիկայի իրենց հաւատակիցների հետ, նրանցից ստանում են գրականութիւն, նիւթական օգնութիւն, դրամ: Դա ներկայացւում էր որպէս մեղադրանք, եւ խորհրդային իշխանութիւնները յատուկ ուշադրութիւն են դարձրել հայ աւետարանականների գործունէութեան այդ կողմի վրայ՝ նրանց որակելով հակայեղափոխական, ամերիկացիների օգտին աշխատող եւ վտանգաւոր՝ խորհրդային իշխանութեան համար: Մինչդեռ, ՀԱԱՄը եւ աւետարանական քարոզիչներն ու ղեկավարները չթաքցնելով իրենց կապերը եւ գործակցութեան շրջանակները, գործել են օրինականութեան սահմաններում, հաւատարիմ՝ այն սկզբունքներին եւ գործելակերպին, որ շարադրուած են հայ աւետարականների ՀԱԱՄի «Կրօնական սահմանադրութիւն»ում: Դրա 16րդ կէտում, որը վերնագրուած է «Համայնքի յարաբերութիւնը այլ քրիստոնեաների հետ», ասւում է. «*Համայնքը պաշտօնական-գործակցական յարաբերութեան մէջ է մտել* ***Ամերիկեան Բորդ Միշընի*** *հետ 1917 թ. սկսած, որից վայելում է* ***նիւթական*** (ընդգծումները հեղինակին են – Ա.Ղ.) *եւ բարոյական աջակցու-*

---

[64] ՀԱԱ, ֆ. 1453, ց. 1, գ. 10:
[65] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 13:
[66] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 36:
[67] *Աւետագիր*, Նիւ Եորք, 1947, էջ 147-48:
[68] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 229, թ. 52:
[69] Ղազարեան-Լեւոնեան, էջ 170-71:

թիւն ըստ հայեցողութեան Բորդի»[70]: Իսկ ՀԱԱՄի «Կրօնական սահմանադրութիւն»ը, ինչպէս ասուել է, 1923 Դեկտ. 19ին վաւերացրել էր Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը:

ՀԱԱՄի յարաբերութիւններն այլ քրիստոնեայ եկեղեցիների եւ աւետարանական համայնքների հետ (հիմնականում Թիֆլիսի, Ռուսաստանի եւ Ալեքսանդրապոլի մկրտչական համայնքներ) նոյնպէս կառուցուած էին ՀԱԱՄի «Կրօնական սահմանադրութեան» եւ Երեւանի համայնքի «Կրօնական կանոնադրութեան» հռչակած սկզբունքներին, գործելակերպին, նպատակներին համապատասխան, ըստ որի՝ «*համայնքը մասնաւոր համակրանք ունի դէպի բոլոր աւետարանական համայնքները, իբրեւ նոյն գործը, սկզբունքը եւ նպատակն ունեցող հաւատացեալներ*»[71]:

ՀԱԱՄը, ինչպէս վկայում են արխիւային աղբիւրները, սկսած 1923ից ձգտել է միանալ Ռուսաստանի աւետարանական քրիստոնեաների (մկրտչականներ) հետ եւ կազմել մէկ միութիւն, որն ըստ ՀԱԱՄ ղեկավարութեան կը նպաստէր աւետարանական աշխատանքների աշխուժացմանը Հայաստանում: Այս միտումն ակնյայտ էր յատկապէս Ալեքսանդրապոլի համայնքում, որը սերտ կապեր ունէր Թիֆլիսի մկրտչականների հետ: 1923 Ապրիլի 1ին Ալեքսանդրապոլում համայնքի պատասխանատուներն աղօթաժողովից յետոյ հաւաքուել եւ, ի թիւս այլ հարցերի, քննարկել են բոլոր աւետարանականների միաւորման եւ մէկ միասնական միութեան ստեղծման հարցը[72]: Հայաստանի Չեկայի նախագահի տեղակալ Մելիք Օսիպովի 1923ի Յունիսի «խիստ գաղտնի» թիւ 2 զեկուցագրում ասւում է, որ վերջին շրջանում նկատւում է յատուկ համակրանք «Անդրկովկասեան բապտիստների» նկատմամբ, եւ դա առանձնապէս երեւում է Ալեքսանդրապոլի աւետարանականների շրջանում: Ըստ զեկուցագրի, նրանք գտնւում էին յայտնի մկրտչական, Անդրկովկասում աւետարանական քրիստոնեաների միութեան համառուսաստանեան խորհրդի լիազօր ներկայացուցիչ Խանոյեանի ազդեցութեան տակ: Զեկուցագրում նշւում է, որ Խանոյեանն իր այցելութիւնների ժամանակ միշտ կանգ է առնում Ալեքսանդրապոլում եւ աշխուժօրէն մասնակցում աղօթաժողովներին, ցոյց տալիս նիւթական օգնութիւն, վայելում մեծ յարգանք: Ըստ նոյն զեկոյցի, Խանոյեանը Ալեքսանդրապոլի համայնքի ղեկավարներից էր, ինչը նրան չէր յաջողուել Երեւանում[73]: ՀԱԱՄն այնքան դէմ էր Խանոյեանի ներկայութեանը Հայաստանում, որ թոյլ չէր տալիս նրան մասնակցել իր հաւաքներին եւ քարոզել իր

---

[70] ՀԱԱ, ֆ. 1562, ց. 1, գ. 1, թ. 4:

[71] «Կրօնական կանոնադրութիւն հայ աւետարանականաց «Արարատեան միութեան» Երեւանի համայնքի», ՀԱԱ, ֆ. 828, ց. 1, գ. 7, թ. 1 շրջ. նաեւ՝ «Սահմանադրութիւն հայ աւետարանականաց Արարատեան համայնքի», ՀԱԱ, ֆ. 1562, ց. 1, գ. 1, թ. 4:

[72] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 23-23ա:

[73] Նոյն, թ.23ա:

համայնքներում: Բայց իրադրութիւնը յետագայում փոխուել է: Խանոյեանը ՀԱԱՄին է ուղարկում մեծ քանակութեամբ կրօնական գրականութիւն, որը մնացել էր Բաթումում: Համայնքի խնդրանքով նա մեկնել է Թիֆլիս, յետոյ՝ Բաթում եւ կարողացել լուծել այդ հարցը[74]:

1923 Մայիսի 8ին Թիֆլիսից Խանոյեանը նամակ է գրում ՀԱԱՄ նախագահ վեր. Միքայէլեանին, խնդրելով ներկայացնել անդամների ցուցակ՝ հագուստ ստանալու համար: Բացի այդ, Խանոյեանը ցանկանում էր իմանալ համայնքի կարծիքը մկրտչականների համառուսաստանեան միութեան խորհրդի մէջ մտնելու վերաբերեալ, միաժամանակ նշելով, որ ցուցակում պէտք չէ ներառել Ալեքսանդրապոլի համայնքը, քանի որ նրանից արդէն տեղեկութիւն ունի[75]: Սրանից կարելի է եզրակացնել, որ յատկապէս Ալեքսանդրապոլում առկայ է եղել միաւորման ձգտում եւ տեղի համայնքը տուել էր իր համաձայնութիւնը: Միքայէլեանն իր պատասխան նամակում յայտնում է Խանոյեանին, որ միաւորման հարցը քննարկուել է համայնքի ընդհանուր ժողովում, տուել են համաձայնութիւն՝ միաւորուել Ռուսաստանի աւետարանական քրիստոնեաների (մկրտչականներ) հետ, եւ դրական պատասխանի հետ Խանոյեանին է ուղարկում համայնքի անդամների ցուցակը[76]:

Խորհրդային Հայաստանի աւետարանականները կապեր ունէին նաեւ Պետրոզաւոդսկի (ի դէմս՝ կալանաւոր Մկրտիչ Տէրոլազարեանի), Կիսլովոդսկի եւ Պիտիգորսկի (ի դէմս՝ Սոֆիա Պետրոսեանի), մկրտչականների հետ: Պահպանուել է 1923 Փետրուարի 17ին Պետրոզաւոդսկից Երեւանի մկրտչական Նարիման Նիկողոսեանին գրած Մկրտիչ Տէրոլազարեանի նամակը, որով նա խնդրում էր ուղարկել հայերէն կրօնական գրականութիւն[77]:

ՄԻՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԵՐ

1924ի սկզբից արդէն գործնական քայլեր են արւում Ռուսաստանի աւետարանական քրիստոնեաներին միանալու եւ մէկ միութիւն ստեղծելու ուղղութեամբ: ՀԱԱՄի կենտրոնական խորհուրդը 1924ին բանակցութիւններ է սկսում Ռուսաստանի աւետարանական քրիստոնեաների հետ՝ ընդհանուր աւետարանական քրիստոնեաների միութիւն ստեղծելու եւ համայնքն ամրապնդելու նպատակով: Ըստ Չեկայի գաղտնի զեկուցագրի, ՀԱԱՄի բոլոր ղեկավարները աղօթաժողովներում խօսում են ոչ-այնքան կրօնական հարցերից, որքան՝ կազմակերպական եւ միաւորման խնդիրներից[78]: Կենտրո-

---

[74] Նոյն, թ. 24:
[75] Նոյն, թ. 23:
[76] Նոյն, թ. 24:
[77] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 91:
[78] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 12:

նական խորհուրդը Ալեքսանդրապոլի համայնքի գործունէութեան քննութեան գործով գործուղել էր Ստեփան Նալչաջեանին, որը պէտք է ստանար տեղի համայնքի համաձայնութիւնը Ռուսաստանի աւետարանական քրիստոնեաներին միանալու համար: Ալեքսանդրապոլի համայնքի ղեկավարները՝ Փանիկեանը, Խանոյեանը, Մելիքջանեանը եւ ուրիշներ, համաձայնել են միութեան հարցում կենտրոնական խորհրդի որոշման հետ, ինչը կարող էր նպաստել աւետարանական աշխատանքներին Հայաստանում, մասնաւորապէս՝ Ալեքսանդրապոլի գաւառում[79]:

ՀԱԱՄը համագործակցում էր նաեւ Երեւանի եւ Ալեքսանդրապոլի մկրտչականների հետ: Հայ աւետարանական եւ մկրտչական եկեղեցիների յարաբերութիւնները բարիդրացիական էին: Օրինակ, Ալեքսանդրապոլի աւետարանական համայնքի քարոզիչ պատուելի Պապիկեանը եւ մկրտչական վեր. Մելիքադամեանը համագործակցում էին Ամերկոմի հետ եւ միասին քարոզում Նպաստամատոյցի Պոլիգոնի որբանոցներում[80]:

Խորհրդային Հայաստանի իշխանութիւնները, կուսակցական ղեկավար մարմինները ՀԱԱՄի պաշտօնական գրանցման պահից յատուկ ուշադրութիւն էին դարձնում նրա գործունէութեան եւ բոլոր ղեկավարների վրայ: Նրանք ձգտում էին մեկուսացնել, Խորհրդային Հայաստանից եւ ԽՍՀՄից արտաքսել աւետարանական համայնքի եռանդուն եւ աչքի ընկնող ղեկավարներին, քայքայել համայնքը եւ դադարեցնել նրա գործունէութիւնը, չնայած այն հանգամանքի, որ հայ աւետարանականները գործել են Խորհրդային Հայաստանի օրէնքների, պաշտօնապէս գրանցուած «Կրօնական սահմանադրութեան» համաձայն եւ ընձեռած հնարաւորութիւնների սահմաններում: Չեկայի «խիստ գաղտնի» զեկուցագրերը սովորաբար աւարտւում էին եզրակացութիւններով, որտեղ աւետարանական համայնքը որակւում է որպէս «*արհեստականօրէն ներդրուած արտասահմանեան բուրժուական հակայեղափոխական կազմակերպութիւն*», իսկ նրա առանձին գործիչներ՝ խիստ վտանգաւոր խորհրդային իշխանութեան համար: Առաջարկւում է ամենաեռանդուն քարոզիչների նկատմամբ ձեռնարկել միջոցներ՝ նրանց ծառայութիւնից հեռացնելու, իսկ միքանիսին՝ Հայաստանից արտաքսելու ուղղութեամբ[81]: Իսկ վեր. Մուդոյեանին 1924ին Հայաստանից արտաքսելուց յետոյ, Չեկան յայտնում է, որ ճիշտ է դրանով մեծ հարուած է հասցուում տեղի աւետարանականներին, բայց մէկ մարդու հեռացումով հնարաւոր չէ թուլացնել եւ կազմալուծել աւետարանական համայնքը, ուստի առաջարկւում է Հայաստանից արտաքսել նուազագոյնը 10 առաւել աշխուժ աւետարանական ղեկավարների[82]:

---

[79] Նոյն, թ. 12 շրջ.:
[80] Նոյն, թ. 14:
[81] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 73 շրջ.:
[82] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 4 շրջ.:

Խորհրդային իշխանութիւնների համար առաւել մեծ վտանգ էին ներկայացնում վերապատուելիներ Միքայէլեանը, Սարգսեանը (նշւում է, որ նա ազդեցիկ եւ բաւական վտանգաւոր է յատկապէս Սամաղարի տեղամասի գիւղացիութեան համար), Բզնունին, պատուելիներ Պապիկեանը եւ Մելիք-ջանեանը, եւ նպատակ էր դրուել նրանց արտաքսել Խորհրդային Միութիւնից[83]:

ՎԵՐՋԱԲԱՆ

Խորհրդային Հայաստանի պետական եւ կուսակցական մարմինները 1924ից սկսած ձեռնարկեցին նպատակադրուած գործողութիւններ հայ աւետարանական գործիչներին մեկուսացնելու, արտաքսելու, ՀԱԱՄը կազմալուծելու ուղղութեամբ: Խորհրդային Հայաստանից վտարուեց վեր. Մուդոյեանը, աքսորուեցին Մարիանա Նիկողոսեանը, աւելի ուշ՝ վեր. Միքայէլեանը եւ վեր. Մելիքադամեանը: Վերջինս 1928ին դատապարտուել է երեք տարուայ աքսորի համակենտրոնացման ճամբար, բայց ժամանակից շուտ ազատ է արձակուել, շինծու մեղադրանքով կրկին ձեռբակալուել է 1937ին եւ գնդակահարուել նոյն տարուան Հոկտեմբերին: Ստալինեան բռնութիւնների զոհ են դարձել նաեւ հայ աւետարանական քարոզիչներ պատուելի Մանուկեանը (գնդակահարուել է 1937ին), Եփրէմ Մկրտչեանը, Երուանդ Տէրգալուստեանը (Երեւանի համայնք), որոնք դատապարտուել են 10 տարուայ ազատազրկման եւ աքսորուել Սվերդլովսկի մարզ, որտեղ էլ մահացել են:

ՀՀ Ազգային անվտանգութեան ծառայութեան արխիւի կարճուած գործերի ֆոնդում (ՀՀ ԱԱԾ ԿԳՖ) յիշատակւում են նաեւ բռնադատուած այլ հայ աւետարանականներ, սակայն նրանց յետագայ ճակատագրի մասին տուեալներ չեն յայտնաբերուել[84]:

1927ի վերջից Խորհրդային Հայաստանի իշխանութիւններն աւետարանական քարոզիչներին ամէն տարի տրուող արտօնագրերի նորոգումը մերժեցին: Բոլոր կրօնական կազմակերպութիւնները զրկուեցին իրենց իրաւունքներից, աղօթատները եւ եկեղեցիները փակուեցին, բռնագրաւեցին աքսորուածների ունեցուածքը աւետարանական քարոզչութիւնը եւ հոգեւոր ժողովները արգելուեցին, ՀԱԱՄի եւ հայ աւետարանական համայնքների գործունէութիւնը դադարեցուեց:

---

[83] Նոյն, թթ.14-14 շրջ.:

[84] Ք. Աւագեան, «Հայ Աւետարանական Եկեղեցու բռնադատուած քարոզիչները (1937-1938 թթ.) (ըստ Պետական անվտանգութեան կոմիտէի փաստաթղթերի)», *Հայկազեան հայագիտական հանդէս,* ԻԳ:2003, էջ 441-98:

THE ARMENIAN EVANGELICAL COMMUNITIES IN SOVIET ARMENIA IN THE 1920S (Summary)

ARTASHES GHAZARYAN (artashes.ghazaryan@rambler.ru)

As of the late 19th-early 20th century Yerevan became the center of the Armenian Evangelical movement in Eastern Armenia. During the first Republic of Armenia (1918-20) and after its Sovietization, several experienced Armenian Evangelical pastors, preachers and activists were actively involved in community life. In 1914 they founded the Armenian Evangelical Ararad Union or community, which basically combined the Armenian Evangelical communities of Yerevan, Vagharshabad, Alexandropole (Leninagan), Nor Bayazed and their surrounding villages and those of Gars (until 1920). The Union was officially recognized by the Soviet Armenian government on December 23, 1923, the day when its "religious constitution" was registered.

Secret documents in the archives of the Soviet Special Services reveal that Evangelism had started to spread in Soviet Armenia between 1923 and 1927. As of 1924 the Union tried to unite with the Russian Baptist Christians and form a single body which would enhance the promotion of Evangelism in Armenia. But no sooner was the Union registered than the Soviet Armenian authorities paid special attention to their activities and their leadership, tried to isolate and deport the active and outstanding leaders from Soviet Armenia and the Soviet Union, to dismantle the community and to bring an end to their activities. This policy was implemented notwithstanding the fact that the community functioned within the Soviet legal perimeters and according to the officially registered parameters of the "religious constitution".

The unification attempts failed, while the increasing oppression gradually paralyzed the Union. Leading Armenian Evangelical activists were deported from the USSR, others were unjustifiably imprisoned and exiled based on false accusations, and others were executed.

As of 1927 the Soviet Armenian authorities refused to grant the official permission which was renewed annually, all the religious organizations were deprived of their rights, the places of prayer and churches were closed, the belongings of those exiled were confiscated, Evangelical preaching and spiritual gatherings were forbidden, and the activities of the Union and the Armenian Evangelical community were stopped.